Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

7523
7524
7525
7526
7527
7528

91(56)
G-16

50

Printed in Turkey

ԿՈՂՄՈՍՈՒՆ Ա. ԲԱՂԴԱՆՈՅՇ
ATELIER DE RELIEUR
A. PAGHTANOUCH
Tchakmakdjilar beyuk yéni han 5-6
Չաքմաքճիլար Մեծ Նոր խան թիւ 5-6

ԱՌԱՔԵՍ

ՏԱՐՈՆՈՅ ՈՒԽՏԻ

ԳՐԵՑ

ԿԱՐԱՊԵՏ ՎԱՐԴԱՊԵՏ

Մխիթար Տարոնայ ուխտի

Կ. ՊՕԼԻՍ

ՍԱՐԳԵԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

—

1878

13258

ՎԷՄ ԳԼՈՐՄԱՆ

Եւ

ՔԱՐ ԳԱՅԹԱԿՂՈՒԹԵԱՆ

Չկայ գործ մը՝ որ պատ-
հառ չունենայ։

Մեր ազգայինք գիտեն, որ Տարօնոյ երկիրն ու վանքն խառվեալ ծովուց պէս կծփայ. սակայն դեռ ոչ ոք նկատողութեան չէ առած թէ, այդ սաստիկ խառվութեան հոգը ուրկից փչելով մտաւ Տարօնոյ երկրի մէջ, և մրրիկ կյարուցանէ։ Մեք վիրքը ի շատէ խելամտած լինելով դորա հանգամանաց, ուզեցինք ի սէր արդարութեան յերևան ածել։

Մինչ մեր մանկութեան օրերն սահելով կանցնէին, Ս. Կարապետու վանուց անուն Տարօնոյ երկրի մէջ արևու պէս կփայլէր։ Հայրս՝ միայն մեր գիւղի նկատ-

մամբ հողագործներէն երևելի մէկն էր. հասակս 14-15 տարուան հասածին պէս՝ դիս տարին Ս. Կարապետու վանքը դպրոց դնելու։ Մեր գացած միջոցին, վանուց Առաջնորդն Զաքարիա վարդապետն էր, որ 18-20 տարուան չափ առաջնորդութեան պաշտօն վարեց. իսկ վանուց դպրոցի տեսուչ և վարժապետն Զաքարեան Կարապետ պատուելին էր, որ ցարդ կենդանի է և Կարնոյ մէջ նոյն պաշտօն կվարէ. Կարապետ պատուելին Մշեցի Բաղդասար անունով տղայ մ՚իրեն կառավարիչ կարգած ըլլալով՝ ի բացակայութեան յիշեալ վարժապետին, բոլոր դպրոցականաց նա կհսկէր. դպրոցի մէջ քանի մը տղայք կային, որ յիշեալ Բաղդասարին հասակակից և ժամանակակից էին, ուստի երբ անոնց մէջ կադ և կռիւ լինէր, Բաղդասարն իւր ճարպկութեամբ գլխոյ և երեսի մորթն քերթելով, և արիւնաթաթաւ դնելով առ վարժապետն՝ կբողոքէր. և այս դրութեամբ միշտ արդարանալով, բոլոր տղայքն իրեն նկուն ըրած էր։

Անցան բաւական օրեր, և վանուց և երկրի կացութիւնը ամէն կերպով խաղաղ էր, սակայն անիւն դառնալով՝ դէպքն այնպէս բերաւ, որ Մշեցւոց և վանուց մէջ խռովութիւն մը ծագեց, և այն խռովութեանց համար որոշուեցան քանի մը անձինք դալ Կ. Պոլիս ի Պատրիարքարան և բողոքել Զաքարիա վարդապետի դէմ, Պատրիարքարանը որոշեց Զաքարիա վարդապետի համար, որ երթայ Եդեսիա առաջնորդ, և այս՝ իբրև աքսոր. և Մատթէոս վարդապետը կարդեց Տարօնոյ երկրին Առաջնորդ։ Կարապետ պատուելին՝ ուելի Զաքարիա վարդապետի ընտիր բարեկամն էր. սկսաւ Մատթէոս վարդապետն քննութեամբ վարուիլ յիշեալ վարժապետի հետ. իսկ պատուելին՝ որ այն ժամանակի երևելիներէն մէկն էր, ամէն ուրեք վարկ ունենալով՝ վարդապետաց խմբակն առ ինքն կազմ և պատրաստ պահելով, սկսաւ դիմադրել Մատթէոս վարդապետին։ Այս դրութեամբ օր ըստ օրէ խռովութիւնը միշտ յառաջ կերթար։ Գալով Բաղդասարի՝ դեռ կառավարիչ էր

և ընդհանրութեամբ վարժապետին. վասնուց միաբանութեան գրերն յիշեալ Բաղտասարին գրել կուտային, և երբ Բաղտասար իւր վարժապետի պաշտօնը կկատարէր, յետոյ միաբանութեան ներքին խորհուրդն հանդերձ գրերով Մատթէոս վարդապետին կտանէր, և այս ընթացքով այնքան սիրուեցաւ Մատթէոս վարդապետէն որ, մինչև իւր բարերար վարժապետին պաշտօն ինքը գրաւեց. վերջապէս Բաղտասար այնպէս խռովութիւն մը սերմանեց Տարօնոյ երկրի և վանուց մէջ, որ եղբայրը եղբօր դէմ մահուան դարան գործելով դերեզման կղատրատէր. որովհետև յիշեալ Բաղտասարն միաբանութեան կողմէն գաղտնիք առնլով Մատթէոսեաններուն կուտար, և անոնց մատէն առնլով միաբանութեան կհաղորդէր։ Արդ՝ երկու կողմի բողոքն ալ՝ Պատրիարքարան նկատողութեան առնլով որոշում պիտի ընէր, սակայն Խօրասանճեան Ամիրայի որոշումն ամենէն նախադաս համարուելով՝ խումբ մը վարդապետ, Կարապետ վարժապետով հանդերձ յաք-

որ մատնուեցան, և Բաղտասար այս կերպ գործելով՝ հասաւ իւր նպատակին։

Երբ երկրի հասարակութիւն սոյն անհաշտ խռովութիւնը տեսաւ վանականաց մէջ, որ իրրև զհնոց բորբոքելով՝ անշիջանելի կերպով ի վեր յերկինս կը-ծառանար, խումբ կազմելով. ելին վանք և Մատթէոս վարդապետի ճանապարհ տալով մերժեցին վանքէն։ Պատրիարքարանը ժողովրդոց այս գործն ուղիղ և օրինաւոր համարելով, որոշեց վանքն յանձնել Կարնոյ Գեր. Գրիգորիոս եպիսկոպոսին, որպէս զի փոխանորդելով՝ վանուց խնամքն տանի, և հասարակութեան սիրտն շահելով՝ երկրի մէջէն խռովութիւն բառնայ։ Գեր. Գրիգորիոս եպիսկոպոսն՝ որ ըստ ամենայնի խոհեմ և ազգասէր էր, իւր բարի բնաւորութեամբ ոչ միայն Ս. Կարապետու վանուց ցրուեալ միաբանութիւնը ժողովեց, այլ և միաբանութեան խմբակէն Բագրատունի Կարապետ վարդապետն ալ իւր կողմէն վանուց փոխանորդ կարգեց, և Պատրիարքարանէն յիշեալ վարդապետին համար առաջնորդու-

թեան արտօնութիւն բերել տուաւ։ Բաղտասար երբ տեսաւ որ միաբանութեան խմբակն աքսորէ եւ դառնալով՝ կրկին վանուց մէջ կժողովին, այնչափ կասկած չունեցաւ աքսորեալներէն, որչափ Բագրատունի Կարապետ վարդապետի առաջնորդութենէն. որովհետեւ յիշեալ Բագրատունի Կարապետ վարդապետ եւ Կարապետ պատուելին սերտ եղբայրութեան սիրոյ կապերով ի վաղուց անտի միմեանց հետ կապուած էին. և Բաղտասարն երկուսի դանակն ալ Մատթէոսի ձեռքով սրած էր, որոյ մին Բագրեւանդ աքսոր ընել տուած էր, և միւսն ալ ընտանեօք ի Կարին։ Երբ Բաղտասար տեսաւ, որ աղուէսի մորթ մեր շտակապետին պիտի երթայ, անմիջապէս կծիկը դրաւ ի Մուշ՝ իւր հօր պայտառութեան հացին։ Բայց Բաղտասար որովհետեւ ամէն կերպով խարդախութեան մէջ վարժուեցաւ, կարելի բան էր կենալ ի Մուշ. այն տեղէն անիւն դարձուցեալով դէպ ի Կ. Պոլիս կը-դիմէ, ուր Կարնոյ Գեր. Գրիգորիոս եպիսկոպոսն կդտնուէր. յիշեալ Սրբազան որ-

չափ որ միաբանասէր և վանասէր էր, աւելի հիւրասիրութեամբ Բաղտասարն ընդունելով իւր քովը պահեց, և Պատրիարքարանի հաւանութիւնը առնելով Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչ Եկեղեցւոյ մէջ ձեռնադրեց՝ անուանելով Մամբրէ վարդապետ, և հետն առնելով տարաւ Իզմիրին, իրեն փոխանորդ կարգեց։

Այն ինչ Տարօնոյ երկիրն ու վանք այլ և այլ խռովութիւններէն զերծեալ խաղաղութեամբ իւր կառավարութեան մակոյկն կվարէր, նախ շնորհիւ Կարնոյ Գեր. առաջնորդին, որ միշտ սիրով լսելով Բաղրատունի Կարապետ վարդապետի դրութեանց՝ Տարօնոյ երկրի բոլոր ցաւոց անմիջապէս դարման կհայթայթէր, և դեռ Գրիգորիոս եպիսկոպոսի հայրապետով խնամքը նոր սկսած էր վայելել Միաբանութիւն, և դեռ Բաղրատունի Կարապետ վարդապետի ճաշակն կատարեալ չառած, և ահա անողորմ մահուան տապարն երկաւքն ալ մի և նոյն ձմեռուան մէջ արմատախիլ ըրաւ։ Մահուան մանդաղն միայն սոյն ծաղիկներով չբաւակա-

նացաւ. այլ և վանուցս քանի մը փորձ առեալ անձանց կենաց թելերն ալ կըտրեց, և ասոնց տեղ յաջորդեցին խումբ մը շահասէր անձինք. էր մաս մը որ Մամբրէ վարդապետի վարմանց հմուտ չէին, և էր մաս մը որ ոչ ինչ պակաս քան զՄամբրէ վարդապետ, կրկին խռովութեան կրակն վանուց մէջ վառեցին, և շատ չմնաց որ փոթորիկ յարուցանէն նոր առաջնորդի մը ընտրութեան մասին, որովհետև ոմանք դուրսէն կուզեն և ոմանք ներսէն. բայց Պատրիարքարան արդէն իւր որոշումն դիտէ. Զաքարիա վարդապետն՝ որ Եդեսիայէն եկած էր, զայն որոշեց առժամանակեայ փոխանորդ. բայց տարի մը անցնելէն զկնի, սոյն պաշտօն տըրուեցաւ Կեսարացի Կարապետ եպիսկոպոսին. իսկ Կարապետ եպիսկոպոսն՝ որ ամէն կերպով բնաւորութեամբ մեղմ և քաղցր էր, և խաղաղութիւնն ոսկի նարօտի պէս միշտ վզէն կախուած էր, ուստի երբ յիշեալ ծերուկ Կարապետ եպիսկոպոսն եկաւ վանք, ուզեց որ բոլոր միաբանութիւնը քաղցրութեամբ սիրաշահէ, և

Մամբրէ վարդապետն ալ կարինէն բերել տալով՝ իրեն փոխանորդ ըրաւ վանուց մէջ, և սոյն դրութեամբ միայն չթողուց Մամբրէ վարդապետն. երբ գնաց Ս. Էջմիածին, Վեհ. Մատթէոս Կաթողիկոսէն ալ պատուանշան խաչ հետը բերաւ. միով բանիւ առաջնորդութեան անուն միայն ունէր Կարապետ եպիսկոպոսն, բոլոր գործերն յանձնած էր Մամբրէ վարդապետին. բայց Մամբրէ վարդապետ՝ որ աւելի անձնասէր և փառասէր էր, անուանց յորջորջումն սիրելի էր, երկրի և վանքի մէջ խումբ կազմելով կուզէր Կարապետ եպիսկոպոսն գահավէժ առնել, և զինքը նորա տեղ առաջնորդ հաստատել. ուստի գործն սոյն դրութեամբ շատ չերկարեց, որովհետև յիշեալ եպիսկոպոսն չունէր այն կեղծ քաղաքականութիւնը որ Մամբրէ վարդապետի ճարպկութեանց դէմ կենալով գործադրէր. սոյն վատ ընկերութիւն այնպիսի դժնդակ օր մը բռնաբարեց զԿարապետ եպիսկոպոս վանքէն դուրս արտաքսելու, զոր տեսնող աղէկտուր լինելով՝ սիրտը

կբեկէր, որովհետև խոր աշնան միջոցին լեռներ՝ ձիւնապատ, երկնից ամպեր ձիւնախառն անձրև հոսելով, և դաշտի երեսի վրայ դեռօրէից պէս հեղեղելով կպզպղճար. թողունք յիշեալ եպիսկոպոսի սրտաճմլիկ խօսքերն, որ սրտի ցաւօք կըսէր, «Սուէք գիս և ընկեցէք ի ծով, զի ծովն դադարեսցի ի խռովութենէ.» Սրդ՝ որչափ որ հեծկլտալով ոյն խօսքեր կըսէր, աչաց արտասուք աւելի քան զերկնից ամպերն հոսելով, երեսի վրայէն առուակ լինելով՝ զին.ք կթանար։ Երբ այսպէս ծերունի եպիսկոպոսը վանքէն դուրս ելին, մոյ հաւանութեամբ ընտրեցին զՄամբրէ վարդապետ՝ փոխանորդել Ս. Կարապետու վանուց, և մոյ հաւանութեամբ գրեցին ի Պատրիարքարան՝ և Մամբրէ վարդապետի համար առաջնորդութեան հրամանակ և կոնդակ բերին։ Մամբրէ վարդապետի կուսակից.ք ոյն վատութեան դիմեցին, քայց ժողովրդեան մեծ մասն ի սիրտ վիրաւորեցան. Մշոյ քաղաքի հասարակութիւնը տեսնելով ոյն եպերելի ընթաց.քն՝ առին Կա-

բաղեռ եպիսկոպոսը, տարին ի Մուշ, և դնելով Ս. Յարութիւն եկեղեցւոյ մէջ պաշտպանեցին իրենց ծերուկ եպիսկոպոսն մինչև դարուն, մեծ Զատկի բարի օրերին։

Սրդ՝ մինչդեռ Տարօնոյ երկիրն այսպէս բաժնուեցաւ, և խռովութիւն օր քան զօր բարձրանալով, բողոքներ դարնան հեղեղի նման կվաղէին Պոլսոյ հըրապարակներ, Պատրիարքարան երկու կողմանց բողոքներ նկատողութեան առնելով, որոշեց որ Կարապետ եպիսկոպոս դարձեալ առաջնորդութեան պաշտօն վարէ. բայց յիշեալ եպիսկոպոս երբ մըտաբերեց որ, եթէ խռովութեամբ կրկին Առաջնորդ նստելու լինիմ՝ ինչ քաղցրութիւն պիտի վայելենք, և զոյս ըսելով անմիջապէս հրաժեշտ տուաւ առաջնորդական պաշտօնէն, և զինք իրր անկաշտող ոք ներկայացուցելով ի Պատրիարքարան, և խնդրելով կեսարիոյ Ս. Գանիէլի վանք, ու երթալով այն տեղն՝ հանդեաւ ի Քրիստոս։ Երբ գործն սոյն կերպարանք առաւ և Մամբրէ վարդապետ կրկին

ֆոխանորդութեան պաշտօնի մէջ մնաց. և ժողովուրդը բաժնուած՝ ոմանք ի Հըրէայս և ոմանք յԱռաքեալս, իսպառ հանդարտութիւն չունէր, Պատրիարքարան ընտրեց զԽրիմեան Հայրիկ՝ Տարօնոյ երկրին և վանքին առաջնորդ, ուր մնաց նոյն պաշտօնի վրայ մինչև Ազգային ժողովոյ միաձայն քուէով և հաւանութեամբ ընտրեցաւ ի պատրիարքութիւն Թուրքիոյ, և հրաւիրեցաւ ի Կ. Պոլիս։

Մեր նպատակն այն չէ, որ սոյն տետրակի միջոցաւ զոմն չատադովենք, և զոմն պարսաւելով անպատուենք. միայն Տարօնոյ վանուց անցից բուն պատմութիւնն է որ կհրատարակենք. մեր իսկ տեսած բաներն են, որ կգրեմք փոքր ի չատէ. արդարասիրութեան ոգւով ընթերցողք կարող են մակաբերել Տարօնոյ վանուց միաբանութեան կացութիւնը թէ ինչպէս վարուած, և ինչ ծառայութիւն մատուցած են Ազգին։

Երբ տեսաւ Պատրիարքարան, թէ Ս. Կարապետի վանուց խուռվեալ վիճակն օր ըստ օրէ կվատթարանայր, ընտրեց

զԽրիմեան Հայրիկ զրկել Առաջնորդ. բայց Խրիմեան Սրբազան Հայրիկ գիտէր որ Մամբրէ վարդապետ ամեն կերպով ընթացամարտութեան մէջ կիրթ է, զինք երբէք առաջնորդի տեղ չդասելով՝ իբրև գաղէք մը եկաւ Աւետեաց երկիրն լրտեսելու. իսկ Մամբրէ վարդապետ որ Խրիմեան Հայրիկի մուտ և ելն գիտէր, խապառ կարևորութիւն չտալով՝ անպատուեց զԽրիմեան, այնպէս որ Վարդավառի մեծ բաղմութեան ժամանակ սենեկէ ի սենեակ փոխեց զԽրիմեան Հայրիկ և Խրիմեան Հայրիկն հարկադրեալ նստելով տանեաց կտուրի վրայ, կըսէր թէ, այս տեղ դուրս է՝ ասոի ոչ ոք զմեզ չհալածէ, ուրեմն աներկիւղ կերպով նստինք։ Եւ անմիջապէս վերադարձաւ ի Վարագ. մէջոց շատ չանցաւ՝ իւր որոշեալ պաշտօնին եկաւ ի Տարօն. Մամբրէ վարդապետ նկատեց որ միաբանութեան մեծ մաս Խրիմեանին հակած են, սկսաւ չանալ երկփեղկել զմիաբանութիւն, և քանի մը սարկաւագներ դրդեց թէ, ձեռնադրութեան խնդիր մը ասէք Խրիմեանին,

և մեք ի սրտէ ջանալով զձեզ ձեռնադրել տանք. երբ Խրիմեան Հայրիկ սոյն խաղը նկատեց՝ խնդրարկուաց խօսք տրուաւ թէ, անմիջապէս ես զձեզ պիտի ձեռնադրել տամ. Մամբրէ վարդապետ տեսնելով որ կարող չէ իւր նպատակին հասնիլ միաբանութեամբ, իր նախկին բարեկամներ ձեռք առնելով՝ ուղեց որ Ժողովրդեան ձեռօք Կարապետ եպիսկոպոսի գլխարկն Խրիմեան Հայրիկին դըլուխն անցունէ։ Վիճակայինք Ժողովեցան ի Մուշ ազգային գործով, և ուղղակի Խրիմեանին առաջարկեցին, կամ մեր արքունական հարկերն թեթևցուր, և կամ ինչպէս որ եկած է.ք, այնպէս վերադարձէ.ք։ Խրիմեան Հայրիկ ընդունեց հասարակութեան առաջարկութիւնը, և ըսաւ թէ պատրաստ եմ ձեր հարկերն թեթևցունել տալ. սակայն հիմայ պիտի Վան երթամ, ի վերադարձիս կաշխատիմ, իսկ եթէ տեղս չեղաւ՝ մինչև Պոլիս դնալով՝ ձեր խնդիրն կատարելու կաշխատիմ. սոյն խօսքերով Խրիմեան Հայրիկն աւելի սիրուեցաւ Ժողովրդէն, և այսպէս ըղ-

Մամբրէ վարդապետ թողուց ի Մուշ իւր տեղ փոխանորդ, և ինքը գնաց ի Վարագ։ Երբ հասաւ ցրօնք գիւղ, անտի գրեց առ Մամբրէ վարդապետ, որ ելնէ երթայ Մուշէն, և ուր կուզէ՝ երթայ. իսկ Մամբրէ վարդապետ զիրն առնելուն պէս թողուց զՄուշ և եկաւ վանք. քանի մը օրէն յետոյ զվանքն ալ թողլով՝ գնաց Փղի, և այն տեղ ժողովրդեան սիրտն ումիտքն որսալով, վիճակն բաժնեց վանքէն և զինքը ազատ առաջնորդ ընել տուաւ։

Սրդ՝ դեռ Խրիմեան Հայրիկ վանք չդարձած, վանուց Միաբանութենէն Յարութիւն անունով վարդապետ մը իւր կեանքը կնքեց։ Սորա համար յառաջադոյն կարծիք կար, թէ ունևոր է. որովհետև յիշեալ ճապաղչուրցի Յարութիւն վարդապետ իւր հայրենական կալուածներ վաճառելով՝ վանքը բերած էր, և իւր վատ ազահութեամբ ժողոված դրամներ քովը պահեստի մնացեր էր, սոյն պահեստի դրամներ այլ և այլ աւաղակութեան մատնուելով՝ վանուց մէջ մեծ խռովութիւն պատճառեց, թէ հանդու-

ցեալ վարդապետի տկար եղած միջոցին պահապաններն ծխնելոյզ քակելով գողացեր էին. սոյն աւազակութեան մասին ոչ ոք տեղեկութիւն չունեցաւ մինչև Հայրիկի վերադարձն։ Երբ Խրիմեան Հայրիկ մուտ գործեց ի վանք, հանգուցեալ վարդապետի սենեկի դուռը բանալով՝ տեսին որ ամենայն ինչ կատարեալ է. ահա նոր պիտի սկսի խռովութիւն, որ քան զամեն խռովութիւն գերազանց է. ուստի երբ ամէն կերպով նկատեցին որ վախճանեալ վարդապետի կահ կարասիքն աւազակի մատնուած է, վանուց մէջ հաւատաքննութեան ատեան մը բացուեցաւ, և կարծիքն իբրև իրական ըմբռնուելով՝ դատապարտութեան վճիռներ կարձանագրուէին. ոչ ոք մատնութենէ զերծ չմնաց, և որոնք որ նոյն միջոցին վանքը գտնուած էին՝ բոլորն ալ ի բանտ մատնուելով դատապարտուեցան. վարդապետաց խումբն բոլորն ալ սկսան Խրիմեան Հայրիկի միտքը դեղել, առնախանձու կուզէին միմեանց կեանքն բառնալ իսպառ յերկրէ. իսկ հասարակ միա-

բանութիւն բոլորովին մառնուած ի բանու-
թիւնց անմեղութեամբ բողոք արձակեցին
թէ, կարելի է որ արդարն ալ մեղաւորաց
հետ դատապարտուի, որովհետև հան-
դուցեալ վարդապետն կարասեաց մա-
տուռնքներ յիշեալ պահապաններու քովէն
ելին, և այնպէս ալ մեծ դումար մը բա-
տակ, և քանի մը ծրար ալ Եկեղեցւոյ
դուռը գտան. ուստի խռովութիւն այն-
պէս բարձրացաւ, որ եղբայր եղբօր թշնա-
մի եղած էր. բոլոր միաբանութեան
արիւներ ժողովեցին, և որոյ արկեղի մէջ
դրամ գտնուէր՝ կ,յափշտակէին թէ մեռ-
ածոյ վարդապետին է. իսկոյն ամեն չա-
բի.ք գործուեցաւ, բաց մարդասպանու-
թենէ. սկսան այլազգիք մեր կրօնքն ծաղ-
րել թէ ատակի համար չարի.ք չի ժողուցին
որ միմեանց դէմ չգործեցին. հասակ ու-
բեռն աղաւեցաւ Միաբանութիւն, և այս
խռովութիւնը մնալով երկրի մէջ՝ բողոք-
ներ դարձեալ շարունակել սկսան, մինչև
Խրիմեան Հայրիկ հրաւիրեցաւ ի Պոլիս։
Արդ՝ երբ Խրիմեան Հայրիկ գնալու էր
ի Պոլիս, իւր տեղ փոխանորդ դրաւ Գը-

ըիդորիոս վարդապետ. Գրիգորիոս վարդապետն փոխանակ համեստութեամբ և քաղցրութեամբ վարուելու, անխոհեմութեամբ՝ Հայը Խրիմեանի բոլոր բարեկամաց սիրտը ցաւօք լեցուց, և այս կերպով վարուելով խռովութիւն աւելի ծանրացաւ, և նորահնար մատնութեանց դիմելով՝ այլ ընդ այլոյ ծանօթութիւններ կատային Մշոյ կառավարութեան, մինչև որ Պատրիարքարան հարկադրեալ՝ քանի մը վարդապետ, և փոխանորդ Գրիգորիոս վարդապետն կոչեց ի Պոլիս ի դատաստան. Արդարև Պատրիարքարան ինչ որոշում տուաւ այս անցից նկատմամբ՝ մեզ յայտնի չէ, միայն բաւական դատուելէն յետոյ՝ վարդապետք արձակուելով կրկին վանքը եկին, իսկ Մամբրէ վարդապետ՝ որ ամեն ժամանակ միաբանութեան միտքն ի կռիւ և ի հակառակութիւն կդեղէր ընդդէմ Խրիմեան Հայրիկի, միաբանութեան դատուած մինչոցին գիր տալով ի Պատրիարքարան թէ, ես Ց. Կարապետ վանուց միաբաններէն չեմ, խոյս տուաւ և այսպէս մերժեց գինքը միաբա-

նութեան ուխտէն։ Միաբանութեան վանք դալէն զկնի շատ չանցաւ՝ Խրիմեան Հայրիկն ալ վերադարձաւ։ Ժողովուրդը՝ որ շատ մը բարիք ակն ունէր Խրիմեան Հայրիկէն՝ իւր խոստման համեմատ, որ Մշոյ մէջ ըրաւ թէ ձեր հարկերը պիտի թեթևցնեմ, երբ տեսաւ որ Ազգին երբէք գործ մը չէ եղած, և միայն իւրաքանչիւր ոք իւր կամք առաջ տանելու համար խռովութիւն հանած է. յարձակեցաւ Խրիմեան Հայրիկի վրայ և վանքէն դուրս ըրաւ. Խրիմեան Հայրիկ սոյն նոր խռովութեանց երեսէն հարկադրեալ կրկին դիմեց ի Կ. Պոլիս և Պատրիարքարան. վարդապետաց դէմ բողոքեց, որոյ վրայ Պատրիարքարան ստիպուեցաւ Կարնոյ Գեր. Յարութիւն Եպիսկոպոսին գրել և ղրկել ի վանք իքննութիւն։

Պատրիարքարանը դիտմամբ Յարութիւն Եպիսկոպոսը ղրկեց, և դիտմամբ քննութիւն բացաւ, որովհետև 30 տարրի մօտ էր, որ խռովութիւնը ընկած էր վանուց և երկրի մէջ և անշինջանելի կրակի պէս մնացեր էր։ Սուտի որոշումն այս

էր. Կեդրոնական վարչութիւն, ըստ սահմանադրութեան, ձեզ իրաւունք տրուած է՝ Վանահայր մը ընտրէք, ինչպէս որ սահմանադրութիւն կտրամադրէ. իսկ երկրորդ, իրենք որոշած էին Խրիմեան Հայրիկ վանահայր, և այնպէս քանի մը անձինք ալ Տնօրէն ժողովոյ անդամ։ Այն որոշմամբ գներ. Յարութիւն եպիսկոպոսն եկաւ վանք. քանի մը անմեղ անձինք մատնուեցան ի դատապարտութիւն ի կապանս աքսորանաց, և խռովասէր անձինք կրկին զերծ մնալով՝ ծաղր զծաղր զարկելով՝ կրկին վանքի խաղաղութիւնը աղմկեցին։ Ահա այն կէտերն կթողունք Հայր Խրիմեանին, թող Հայրիկ խղճով վկայէ։

Ի՛նչ որ կգրենք, այսուհետև. պէտք եղած նամակներու պատճէններով կնորկայացուցնեմք, յորոց ակներև պիտի տեսնուի, թէ որով ճարպկութեամբ Մամբրէ եպիսկոպոս խաւնեց զվանք և ինչպէս խբր նպատակին հասաւ, և թէ՝ ինչ չարիք գործելով վանուց մէջ՝ մինչև վանքի հիմը տապալելով, ծանր պարտուց ենթարկեց։

Յայտնի է վանուցս 1866 ի խռովութիւնը, որ բոլոր լրագրաց միջոցաւ ամենուրեք հրատարակուեցաւ. քանի մը վարդապետաց նկատմամբ, որ չարչարանաց խաչն շալակելով՝ մինչև ի Ս. Երուսաղէմ գնացին։ Երբ շղթայակապ ճանապարհին կերթայինք՝ մեզ ընկերացող զօրականաց մեծը, մտրակով սատիկ մեր ձիերն կը խթանէր, որ ձիերն զմեզ գետին ձգեն. մեք քաղցրութեամբ աղաչելով կըսէինք, կբաւէ զմեզ նեղէք. իսկ զօրականն սկսաւ հայհոյել, այնպէս ոչ կրօնք ոչ հաւատ... ևն. խնայելով Ս.րդ՝ երբ տեսանք որ կուզէ մեր արիւն լափել, մեք ևս փոխարէն իրեն ըրինք ի՛նչ որ պէտքն էր, մէկէն հրացան դնելով սրտիս վրայ՝ ուզեց բանալ, բայց բարեբաղդաբար անձրևաստակութենէն հրացանի վառօդ չուր էր եղած. որչափ արձակեց՝ միայն լուցկէքն առնելով ներգործութիւն չունեցաւ. ի վերջոյ տեսաւ որ հրացանով գործ չըլլալիր, սրով յարձակեցաւ. իսկ մեք երբ նկատեցինք որ մեր վերջին շունչն է. ըսկըսանք զմեզ պաշտպանել, մինչև մեր ըն-

կերներ հասին մեր կեանքն ճողոպրեցին, և յետոյ դիս չուանով կրկին կապեցին, և այսպէս երեք օրուան ճանապարհ տարին. և երբ մօտեցանք ի Տիգրանակերտ, դիս արձակեցին և մեր ընկերներով խըղճութեամբ մտինք յիշեալ քաղաքն. մէկ ժամու չափ կառավարութեան դուռը կապուած մնալէն ղկնի՝ ուրիշ զօրականաց յանձնելով Ալիփաշար գիւղն տարին. յետոյ լսելով տեղւոյն բարեպաշտ ժողովուրդն և Յակոբոս եպիսկոպոսն՝ մեզ օգնութեան հասան. երեք օր յիշեալ գիւղը մնալէն յետոյ զօրականք կրկին եկին, և Յակոբոս Սրբազան ու Ճէնէղեան Սառաքել աղան աղաչեցին թէ վարդապետներն մի չարչարէք։ Սրդ՝ երբ ճանապարհ երթինք՝ ըսին թէ, 4 ժամու ճանապարհ ունիք այսօր. երբ Ալիփաշար գիւղէն մեկնեցանք, մեր զօրականք սկսան այլ և այլ պատճառներով զմեզ թողուլ և երթալ, իսկ մեք գնալով մինչ ժամ 11 ½, նոր երթինք բարձր լեռան մը գլուխ, ուր խապտառ շինութեան հոտ չկար և միայն արիւն կհոտէր. մեք ժողովրդեանք մէկտեղ և ը-

անք թէ մեր գերեզմանի դուռն կերթանք մեք. մէկ զօրական ճանապարհ էր քովերնիս, զայն ևս բռնեցինք և մեր հետն առնելով ճանապարհնիս շեղեցինք. գիշերուան մթոյ մէջ թաղուելով դժնդակ ձորի մէջ մտինք, զառի վայր գլորելով կերթայինք, բայց ուր, միայն Տէր գիտէ. ի վերջոյ գնալով բարձր սուր և խոռոչաւոր քարերու ներքև միասին ժողովեցանք, ըսինք որի զինուոր, զմեզ ուր կտանէիր. պատմեց թէ՝, մեր ընկերներով խորհեցանք զձեզ սպաննել, որովհետև ձեզ նման ոչ մը ամեն ժամանակին ձեռքերնիս չանցներ. իսկ լուսոյ մօտ ձիւնախառն անձրև գալով մեր վրայ, և առաւօտեան եկնելով մեր զօրականով միասին Ղարաբաղլայ գնայինք, Հոկտեմբերի վերջին օրերն էր, որ այդ լեռներու գլուխ զմեզ կշարչարէին. ինչ և իցէ՝ այս կերպ չարչարանքով մինչ Ս. Երուսաղէմ վարուեցանք։ Սոյն բաժնուս ոչ միայն երկինք և երկիր վբկայ կկացուցանեմ, այլ և Տարօնոյ աշխարհէն եկնելով և Արաբիոյ խոր խորշերու մէջ տեղէն անցնելով մինչև Ս. Երու-

սաղէմ ճանապարհի վրայ տեսանող բոլոր ազգայինք գիտեն և վկայեն, թէ ինչ նահատակութեան հանդէսով կվարուէինք և այսպէս գայթակղութեան քար եղած էինք մեր սիրելի ազգայնոց աչքերուն, և ընելով կըսէին թէ արդեօք ինչ չարի գործողներ են, որ անողորմաբար և կեղեքելով կվարուին հետերնին։ Երբ մեռած գործեցինք ի գերահրաշ վանս Ս. Յակոբեանց, Եպայի Ս. Պատրիարքք Հայրն իւր միաբանութեամբ հանդերձ մեզ վշտացելոց ամէն կերպով մխիթար հանդիսացան։ Այս կէտեր կարդացած ժամանակ, թող Խրիմեան Ս. Հայրիկի ականջը խօսի, որովհետև ի խղճէ ստիպեալ՝ յանմեզս մեր կրած չարչարանաց մասին ինքն ևս պիտի վկայէ, վասն զի բուն իսկ Ս. Հայրիկն ալ վանուցս կեղծ սրբութեան և ճարպկութեան չուանով կապուեցաւ, որովհետև մէկ կողմէն խաբդախ սրբութիւն մը կը շողար և միւս կողմէն կեղծ սէր մը կփայլէր վանուց մէջ, և այս ամենուն վանուցս լուսարար, և Մամբրէ վարդապետն հեղինակ լինելով կապած

էին բոլորի միտքն. անհրկիզ կըսեմ, մինչև անգամ բուն իսկ Հայրիկ սխալեալ դայթակղեցաւ այդ քարով, ընդունելով կեղծ լուսարարի բորտ պաշտօնէի ըրած պարտուց 75000 ղրշի դումարը, որ վանքէն վճարուեցաւ. և թող ղայս, նորէն ձեռք մը եկեղեցւոյ ղեկաւալ պարտիզի սեռնեկէն դուրս հանելով որ բոլորն լափած էր . . . ելն. և երբ Կարնոյ գերբ. Ցարութիւն եպիսկոպոսն քննիչ եկաւ, յիշեալ ծախուց նկատմամբ սոխի և սխտորի սերմերով լեցուն ցուցակ մը կվաւերանայ լուսարար վարդապետին։ Իսկ Մամբրէ վարդապետն վանուց ցուցն առնելով ի ձեռին և վանուց դպրոցականներէն ալ զումանս յինքն յանկուցանելով՝ Բարութայ ողբը նուագելով կըսէր, դնացէք, որդեակք իմ, դնացէք։ Ս.Հաւոյն ճարտար անձանց վարմունքն ի ներքուստ և ի վերուստ Խրիմեան Հայրիկի սիրան առ միաբանութիւն կդրդռէին. իսկ խարուսիկ քաղաքապետն գիտէր որ անմեղ գնացողք պիտի դառնան, բայց երբէք իրենց մտքէն չէր անցնէր։

որ իրենց գործեր ազիտի խայտառակին։

Անցան մեր վրայէն խել մը տխուր օրեր, եկան այն խաղաղ ժամերն, որ բարեխնամ Եպսի Ս. Պատրիարք Հայրն, Ս. Երուսաղէմէն գրով առնլով զհաւանութիւն ամենապատիւ Ս. Գօղոս Պատրիարքի Կ. Պոլսոյ, ղրկեց զմեզ ի Կ. Պոլիս, ուր կգտնուէր Խրիմեան Հայրիկն ալ. Ս.ղդային կեդրոնական վարչութիւն, անցած անցքերն քննութեան ենթարկելով որչափ որ զմեզ անմեղ դատեց, այնչափ ալ զԽրիմեան Հայրիկն ազդասէր տրամադրեց։ Իսկ մեր ընկերներէն Յակոբ վարդապետ՝ որ կատարեալ աշակերտութիւն ըրած էր կեղծ քաղաքապետին, շհաւանելով իւր նպատակին, որ Մամբրէ վարդապետին առաջնորդ լինելով մեր հետն վանք դառնար, ընդ վզեց կեդրոնական վարչութեան բարձր որոշմանէն և կրկին սրտակոտոր դարձաւ Ս. Երուսաղէմ՝ կեղծ արբութիւն մը վարելով Խրիմեանի անկման կապասէր և Մամբրէի յաջորդութեան, իսկ մեք քանի մը եղբարց հետ՝ որ սոյն խաբեսիկ ծրագրէն

տեղեկութիւն մը չունէինք, միրոյ ընդունեցինք Ազգային կեդրոնական վարչութեան հրաման, և Խրիմեան Հայրիկի հետ միասին դացինք մեր Հայրենի երկիրն։

Որչափ որ բարեխնամ ազգային զմեզ իբրև Հայր և որդի արձակեցին, սակայն բնութեան ներքին ցնցումն մըղելով զմեզ խեթիւ միմեանց կդիտէինք, և խռովութիւն սկսաւ դարձեալ տարածուիլ, որով Խրիմեան Սրբազան Հայրիկն վերատին վանքէն դուրս պիտի ընէին, բայց Խրիմեան Հայրիկ ըստ յաջողութեան իւր բարի բախտին՝ բարձրայաւ յաթոռն Պատրիարքութեան Կ. Պոլսոյ։ մեք ևս դալով Պոլիս՝ կբնակէինք։ Ի՛նչ անցքեր որ անցան մեր և Հայր Խրիմեանի մէջ տեղ, կթողունք. որովհետև անցեալ խռովութեանց նկատմամբ եղած գրուածներ կեցած են երկու կողմէն ալ։ Բայց գովելին այն է, որ խռովութեան եռևէն աւելի խաղաղութիւն թագաւորեց մեր մէջ, և սուրբ սիրոյ քաղցրիկ հողմն հնչելով Հայրիկի սրտի մէջ, սկը-

տաւ իւր հայրապետական խնամքն մեր վերայ սփռել, և հետևեալ պաշտօնական գրով դրկել զմեզ մեր հայրենի երկիր, որոյ վանահայրն ալ դեռ ինքն էր։

«Արժանապատիւ փոխանորդ հայր, և Գլակայ ուխտին վանական ժողովոյ մեծարոյ անդամք. — Ահա կդառնան ողջամբ իրենց հայրենի տուն ի Ս. Կարապետի վանս, ուստուծաբեր եղբարք՝ Տէր Նոյի և Տէր Կարապետ միաբան վարդապետները. դոքա սրով իցէ դժպատահ առիթներով բաւական ժամանակ օտարութեան մէջ դեզերեցան և հեռի մնացին . . . ելն. ես ըստ իմ հայրական պարտեաց ընդունեցի և պատուասիրեցի զիրենք. կպահանջեմ որ Գլակայ վանուց ժառանգորդ եղբայրներն ալ նոյն առնեն, այսինքն նոյն սիրով և մեծարանօք ընդունին զիրենք . . . ելն։

«Ակն ունիմ զի այսուհետև սրբա և հանոյն միաբանական ուխտն պարտ ու պատշաճ քաղաքավարութեամբ վարուելով ընդիրեարս ամրապէս վերահաս-

տատուիք ի սէր, ի միութիւն ի խաղաղութիւն և ի շինութիւն սուրբ ուխտիդ. . . ևն։ Ոմանք այնպէս կարծեցին և տակաւին ինոյն կարծիս կան թէ, Եկեղեցեան Հայրիկ օտար և անժառանգորդ գոլով . . . Գլակայ ուխտի բնիկ ժառանգորդ եղբայրները տարադիր ցրուեց ուրաժնեց, զի ինքն միայն տիրեսցէ։ Բաւ, օն և օն արտայէ Տէր, թէ Հայրիկ երբէք մտաբերեր է այդպիսի ինչ, զի գիտեմ և կը ճանչեմ իրաւունքը թէ, Ս. Կարապետի բնիկ միաբան եղբայրները նոյն վանուց հարազատ ժառանգորդներն են . . . ևն։

«Թէև բաւական ժամանակ Տարօնոյ աշխարհին ծով յուզեցաւ ու խռովեցաւ, օրհնեալ է Աստուած, այժմ հանդարտ է. դնայնն այդ խռովայոյզ օրերը, մեր և ձեր հաշտութեան ձիրանի զօրին Գլակայ բլրակին վրայ կամար կապած է, խնդրեմ որ այս սուրբ սիրոյ նշան միշտ տատև պայծառ պահէք, չմոռնաք այլ ևս, որ այդ մրրկալից փոթորիկ անդրէն վերադառնալով վերատին խռովին եղ-

բարք . . . Եվ՝ Իսկ ես որ զուրկ և հեռի եմ և կարօտ իսկ միաբանական խմբիդ, աղօթելով խնդրեմ . . . Եվ՝ Եւ ես կաղաչեմ վասն ձեր եղբարք որ այդ հաշտութեան աղեղն միշտ փայլի մենատանիդ վրայ, և մի՛ երբէք անյայտ լինիմ աչաց և ի սրտից ձերոց և դուք առ հաստատակ միաբան խորհեցէք միաբան գործելով ի լաւ անդր յառաջդիմութիւն ի փառս Տարօնոյ աշխարհին, և Գլակայ հռչակաւոր մենաստանիդ. »

Աղօթակից ձեզ.

Պ. Կ. ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ

Երբ մեք սոյն հաշտութեան պաշտօնական գրով մուտ գործեցինք ի Ս. վանս, վանուց փոխանորդ՝ արժանապատիւ Գարեգին վարդապետն էր. յիշեալ փոխանորդի սիրոն ուրախութենէն թունդ առաւ, այնպէս սիրով զմեզ ընդունեց, ինչպէս որ Հայր Խրիմեան գրած էր թէ, հաշտութեան ծիրանի գօտին կամաւ կապած է Տարօնոյ բլրակի վրայ. ուստի արժանապատիւ փոխանորդ

աւելի սիրոյ և խաղաղութեան աղբիւր եղաւ. իսկ մեք խոպան մոռցանք մեր կրած հալածանք, սուրբ սիրով և խաղաղութեամբ միաբանելով միմեանց հետ. և սոյն խաղաղութեան վրայ փոխանորդ հօր հետ հիմնեցինք կեդրոնական վարչութեան տուած վանօրէից խորհրդոյ հրահանգն, և ըստ տրամադրութեան սոյն հրահանգին՝ ի ձեռն Արժ. փոխանորդ Գաբրիէլին վարդապետին, անխարդախ կերպով բոլոր հաշիւներ ի լոյս գալով, ամէն մարդ ազատ դիտողութիւն ըրաւ, և իւր կարծիքն յայտնելով խոհեմութեամբ և սիրով լուծուեցաւ. նոր Տնօրէն ժողով ընտրուեցաւ ըստ հրահանգին, նոր կազմեալ ցուցակներ շինուեցան, և որոշուեցաւ որ այսուհետև ամեն ծախք և եկամուտ նոր հրահանգին համեմատ լինի. Ով որ կուզէ այս մասին աւելի տեղեկութիւն առնել, թող 1873 և ապրիլ 11ի արձանագրութիւնները կարդայ, որ Ս. Կարապետու վանուց դիւանատանմէջ կգտնուին։

Բայց Մամբրէ վարդապետ, որ զինքէ

բաժնելով վանքէն՝ ինքը առաջնորդեց, և այն տեղ ապա խռովութիւն հանելով ձգեց, և այն տեղէն գալով ի Բաղէշ՝ ըստ պարան պիտի հաստատէր, ձեռք ձգեց Տարօնոյ Ս. Սուրբերոց վանք, ուր հին գրեանք թարգմանելով ապրը պիտի լուսաւորէր, և այսպէս Տրդի, Բաղէշ քաւաքանատակ հաւաքելով յանուն տպարանի՝ երբէք քան մը չըրաւ. թողուն ք պատաքին ղեղծումները, որ Բաղշոյ մէջ խռովութիւն հանելով եկաւ Կ. Պոլիս. պիտի դատուէր, և Բաղշոյ իրաւունքն արդարացնելով կրկին պիտի իւր վիճակն դառնայր. միւս կողմանէ Բաղշոյ ժողովուրդն ալ հանրագիր տալով խնդրեց Զաքարիաքարանէն, որ Մամբրէ եպիսկոպոս ըլլայ. և Ադդ. վարշ. ալ այս կերպ վաւերացոյց, և գրկեց Բաղշոյ նկատմամբ Ս. Էջմիածին առ Գ. հիսփաս Գէորգ կաթուղիկոսն, և Բաղշոյ վրայ եպիսկոպոս ձեռնադրեց։ Ադդ՝ եթէ Բաղշոյ եպիսկոպոս էր, երբ ձեռնադրուեցաւ, ինչու չգնաց Բաղէշ, թողուց վիճակն նոյն տարուան կացութեան մէջ և եկաւ Կ. Պոլիս. քայց Մամբ-

ըէ Սրբազանի մտքը ոչ Պոլիս և ոչ Բաղէշն է, այլ Տարօնոյ բլրակն. և եթէ Յովհաննէս Սրբազան Հայրիկ կարող է հաշտութեան կարմիր գօտին կամար կապել տալ, մի թէ կարող չէ՞ Մամբրէ Սրբազան զայն հաշտութեան ծիրանի գօտին քակելով նորա տեղ խռովութեան սև գօտի մը կապել, որովհետև Մամբրէ Սրբազան թող տալով զԲաղէշ, Կ. Պոլիս վանօրէից խորհրդոյ ժողովին առնապետ եղաւ, կարելի՞ բան է, որ Մշոյ Ս. Յարութեան վանուց միաբանութեան մէջ խռովութիւն չհանէ։ Մինչդեռ վանքին դրութիւն խաղաղ էր, և արժանապատիւ փոխանորդ Գարեգին վարդապետն նորընտիր Տնօրէն ժողովի հետ նիստ ընելով՝ վանուց ինչ ինչ գործոց նկատմամբ կը խորհէին, Մամբրէեանք և Լուսարարեանք կրկին սկսան իրենց նախկին խռովութեան թելերը հինել. կը բաւէ՝ վանքս անվանահայր մնայ, և կամ ըստ արամադրութեան վանօրէից խորհրդոյ հրահանգին՝ փոխանորդն վանուց բնիկ միաբան լինելու է, և այս տեսակ փոթորիկներ

յարուցանելով, դիմադրութիւն և խառնվութիւն միշտ անպակաս եղաւ վանքէն։ Սրդ՝ Խրիմեան Սրբազան երբ դեռ Պատրիարք էր և վանքիս ալ վանահայր, փոխանորդն իւր ժողովով միասին ընտրեն զ վանահայր, քայց Խրիմեան Հայրիկ դեռ վանահայր է, և վարչութենէն նոր հրահանգ մը չէ եկած, որ Խրիմեան հրաժարեալ է ու նոր վանահայր մը ընտրեցէք. իսկ շահառէր և խբուռխայրդ անձինք երբ տեսին որ միջոցն իրենց չօգնէր, կեղծուկ քննելով թէ Խրիմեան արդէն վանահայր է և մեք կընդունինք, քայց Վանօրէից խորհրդոյ տուած հրահանգն ապօրինի գործադրուած է, և կուզենք նոր փոխանորդ և նոր տնօրէն ժողով ընտրուի. ի վերջոյ օր ըստ օրէ կրկին խառվութեան մէջ կերթանք, և այն խառվութեան մասը միշտ դուրսէն եղած է։

Ահա Մամբրէ եպիսկոպոսի մէկնաճակն, որ Պոլսէն առ միաբանութիւնն գրելով՝ գվանք կխառնէր։ — «Սրժ. Տ. Գաբրիէլ Վ. Խաչատուրեան, միաբա-

նութեան Ս. Կարապետի Տարօնոյ, սիրելի ի Տէր։ — Սիրելի վարդապետ, շնորհ ունիմ Սրբ. փոխանորդ Մխիթար վարդապետէ, նոյնպէս և ի ձէնջ, որ քաջութեամբ առ ամենայն դէպս զհաւատարմութիւն ոգւոյ ձերոյ ցուցանէք առ իս, զորմէ յայս նուագի կարի առաւել իմն զոլութեամբ զրեալ է ինձ վահան մերքաջ լերուք և պաշտպանեցէք զամենայն իրաւունս Ս. ուխտիդ, աջակից և օժանդակ կացէք յամենայնի Սրբ. եղբօր մերում փոխանորդի Տ. Մխիթարայ վարդապետի, միաբան պահեցէք ընդ ձեզ զՍ. եղբայրն, որ ընդ ձեզ ստորադրեալ էին ի թղթի անդ, և զմիւս եղբարսն ևս ջանացէք ածել ի նոյն միաբանութիւն ձեր. երանի թէ ընդ խորէն վարդապետի և դուք դայիք ի մայրաքաղաքս. այժմ ամենայն ինչ վճարեալ էր անշուշտ. զայս կյիշեցուցանեմ ձեզ ասատանօր, զի թէ հաճոյ թուեսցի ձեզ՝ կամ հարկն իսկ ըստիպեսցէ՝ առանց վարանելոյ ի ջանիցէք ի Ե. Պոլիս ի վերկել միանդամայն զվանա և զբերկիրդ ի ձեռաց վանեցւոց . . . ևն։

ընդ ողջունիս և շնորհակալութիւնս մատուցանեմ. զթուզթս առաքեցուն մի հաղորդեսցիք, այլ զսրդոյնս և զդոհութիւնս. ողջ լիր։

ՄԱՄՐԷ ԵՊԻՍԿՈՊՈՍ
ի տանէ Մամիկոնէից

5 սեպտ. 1873
ի Կ. Պոլիս

Մամբրէ Եպիսկոպոս՝ որ այն ժամանակ անցեր էր վանօրէից խորհրդոյ գլուխ, և ամեն ուրեք այս կերպ գրեր կարձակէր, կարելի՞ բան է որ վոխանորդն և ժողովն լսելով հանգիստ մնան, որովհետև Մամբրէ սրբազան ծանօթութիւն կուտար թէ ձեր տունը օտարներու ձեռքէն ազատեցէք. և այս ցնցումն խառնելով զվանք, միշտ մրրիկներ յարուցանելով վանքէն խռովութեան անպակաս էր։ Ահա խռովութիւն նամակի մէկ ազատճէն, որ Գարեգին վարդապետի օրով եղած է։

«1873 մայիս 26 ի վանս Ս. Կարապետի Մշոյ։

«Քաջ որուս վանօրէից խորհրդոյն

խնքագրած սահմ. հրահանգին վանքա-
ժամանելէն և գործադրութեան սկսելէն
ի վեր Ղունկիանոս, Խորէն, Գաբրիէլ վար-
դապետները շարունակ խռովութիւն,
ընդդիմութիւն, անկանոնութիւն ընելով.
խռովութիւն կ.յարուցանեն թէ՛ ընդհա-
նուր և թէ՛ տնօրէն ժողովներու դէմ,
հակառակ միաբանութեան և Ս. վանուց
բարեկարգութեան, որով ընդհանուր և
տնօրէն ժողովոց ազդեցութիւնը կը խա-
փանեն, և ըստ որում ժողովները ան-
սահման կերպով ազատութիւնը կ.յարգէ-
ին, յուսալով որ համոզեն զանոնք, սակայն
յայտնապէս տեսնելով որ անոնց մտա-
դրութիւնը ժողովները իրենց ուզածին
ծառայեցնելն է և կամ լուծել, ինչպէս
որ բազմիցս յայտարարեցին թէ, բողոքա-
գրած են.ք տնօրէն ժողովոյ ընտրութեան
և քուէարկութեան դէմ, դիւանի կարգ-
մութեան և վոխանորդի դէմ... և հե-
տևապէս ընդհանուր ժողովս յիշեալ
վարդապետները համարելով խաղաղու-
թեան և բարեկարգութեան վրդովիչ,
ըմբոստ... և եթէ նորէն տեղի տան

ուրիշ միջոցներով զանազան անկարգութեանց, փոխանորդն և տնօրէն ժողովը իրաւունք ունին անոնց մասին արժան համարուած գատաստանը իւրաքանչիւրներու։

Համաձայն ժողովոյն կատարագրեմ, փոխանորդ՝ Գարեգին վարդապետ, Ատենապետ՝ Եսայի վարդապետ Ղևոնդեան, Ատենադպիր՝ Կարապետ վարդապետ Եսայեան, Մկրտիչ վարդապետ Խընամիրեան, Առաքել վարդապետ Սաֆարեան, Յովհաննէս վարդապետ Նազարեան, Մկրտիչ վարդապետ Տնտեսեան, Լուսարար Յարութիւն վարդապետ, Թադէոս վարդապետ Խաչատուրեան, Լուսարար Յակոբ վարդապետ Գրիգորեան։

Արդ՝ երբ խուսափութիւն այս տեսակ առաջ գնալով օր ըստ օրէ կբարձրանայր, և անխոնջ աշխատութեամբ կուզէին իրենց նպատակն առաջ տանելով ապրիլ Սահմանադրութիւնը կոչնչանել, որովհետև Մամբրէ սրբազանը նստած է Պոլիս շաբաթ հեղ մը մեծամեծ ծրարներով նամակներ կարձակէ վանուց միաբանու-

թեան մէջ խնձոր գլորելով, թէ, ահա մօտ է որ ձեր տունը աղատէք վանացւոց ձեռքէն. նաև իւր ձեռնատունք, զոր ի Քղի և ի Բաղէշ ձեռնադրել տուած էր, վանօրէից խորհրդոյ որոշմամբ վանուցս միաբան հաստատել տուաւ, զի մեծամասնութիւն կազմէ, ուստի վանուցս Սրբ. փոխանորդ Գարեգին վարդապետը Նկատեց որ Երիմեան Հայրիկի Պատրիարքութեան դադարումն մօտ է, և վանուցս միաբանութեան մէջ օր ըստ օրէ խռովութիւն կյաճախէ, աւելի լաւ համարեց քաղցրութեամբ հրաժարիլ քան թէ խռովութեամբ փոխանորդ մնալ։

Երբ Գարեգին վարդապետ իւր հաշիւն տալով վանքէս մեկնեցաւ, Մխիթար վարդապետը փոխանորդ ընտրեցին. իսկ Մխիթար վարդապետ՝ որ Մշոյ առաջնորդ եղած էր Երիմեան սրբազան Հայրիկի վանահայրութեան ժամանակ, Մշոյ աղգայնոց նկատմամբ երբեմն ի Կարին և ի Կ. Պոլիս դնալով, մեծ ծախուց ցուցակ մը կներկայացնէր, և երբ յիշեալ Մխիթար վարդապետն որ Երիմեանի ձեռ-

քով աքսորուած էր ի Ս. Երուսաղէմ, ոյն անոյշ համար աւելի Մամբրէ սրբբաղանին յարեցաւ. և այսպէս միշտ վանուց մէջէն խռովութիւն անպակաս եղաւ մինչև որ Խրիմեան Հայրիկը Պատրիարքութենէ հրաժարեցաւ։ Յաջողեցաւ Մամբրէ սրբազան ժողովել մեր հայրենակից պանդուխտ տարօնացիք, և յարձակելով Պատրիարքարանի վրայ՝ կայսերական հրովարտակաւ վանահայր կարգեցաւ Մշոյ վանուց, և այնպէս ալ, երբ Մխիթար վարդապետ Իսխանորդ ընտրուեցաւ, հակառակ վանօրէից խորհրդոյ հրահանգին, գաղտնի վանքէն հանրագիր ժողովելով ղրկեց ի Պատրիարքարան թէ, Մամբրէ եպիսկոպոսն վանահայր կուզենք. և Պոլիս ընդունեց ոյն ապօրինի հանրագիրն, և Պատրիարքարանի տուած ամեն ֆիրմաներ. բոլոր ապակիներ խորտակեցին. հակառակ սահմանադրութեան՝ Մամբրէ սրբազանը վանահայր կուզէին. մուցան սահմանադրութիւն, մուցան վանօրէից խորհրդոյ հրահանգի այն յօդուածն, որով կեդրոնական վարչութիւն

պիտի հրահանգ դրկէր վանք նոր առաջնորդի մը ընտրութեան համար. Մամբրէ արքեպան կարդեցին վանահայր, որ գալով վանուց մէջ ապօրինաւորութիւններ գործեց, և մեք ի խղճէ ստիպեալ բողոքեցինք, և շատ մը բռնութեանց ենթարկուեցանք, մինչև զմեզ Պոլիս ձըգեցինք։

Ընդհանուր կարծիք կայ, թէ Մշոյ վանք շատ եկամուտներ ունի. ոմանք կըսեն՝ 400000, այլք՝ աւելի, և են որ պակաս կհամարին։ Պէտք է գիտնալ որ Մշոյ վանք միւս վանքերէից պէս կալուածներ չունի այլ և այլ տեղեր. միայն տուն մը Կարնոյ մէջ ունէր. զայն Խրիմեան Արքեպան Հայրիկ տուաւ յիշեալ քաղաքացւոց՝ դպրոց շինելու համար. որ շինուեցաւ, և անոր փոխարէն վանուց 1000 ղրշ բերող կալուած մը պիտի տային, բայց դեռ չէ տրուած։ Ունի Պոլիս վէզիր խանի մէջ երկու սենեակ ընդ մէջ, որ երբէք վանուց ցուցակներու մէջ նշանակուած չէ թէ յիշեալ սենեակներէն տարեկան այսչափ եկամուտ եղաւ վա-

նուց, և այս ինչ նիւթին ծախք եղաւ։ Նաև կլսեմք որ Կարնոյ կան գիւղի ճանապարհի վրայ կէս տուն ալ ունի. ասոր համար երբէք տեղեկութիւն մը չունինք թէ ո՞վ կառնէ և ինչ կըլլայ։

Սրդ՝ Ս. Կարապետու վանուց եկամուտն է ուխտաւորներէն, ընդհանուր Ցանկաստանէ և Ռուսաստանէն, և առատութիւն կայ՝ ուխտաւորներէն դարպաս առնուլ. տարի կայ որ 150000 ղրշ եկամուտ կը լինի. տարի կայ, որ 160000 ղրշ կը լինի, բոլոր եկամուտով թէ Ս. գերեզմանէն եկած և թէ՛ մատաղէն, Ունի 3 վիճակ որ վանուց միշտ տուրք կուտան. պաղի, մատաղ, լծոյ գլուխ 1 հօխայ իւղ, հոգեբաժին. Իսկ վիճակներ ասոնք են՝ Պուլանուխ, Զուղուր, Խընուս, Դաշտ, Վարդոց, Զալախչուր, այն վիճակներէն 1500 քիլէ ցորեն կուգայ, 1000էն աւելի մատաղ կուգայ թէ գառ և թէ կուլ, 200 լտերէն աւելի իւղ կուգայ, թող հոգեբաժին, և այլն։

Գալով վանուց երկու փակահներու, երբ Մամբրէ Սրբազան նոր եկաւ, կային

50 հատ լծան գումիշ, 40էն աւելի լծան եզ, այնպէս ալ կով մատակ, արջառ, երինջ, ելն. ի վերջոյ 300ի չափ տաւար, եզինք, 25 ձի, 30ի չափ աւանակ, 4000էն աւելի ոչխար բաց ի գառներէն, 300 քիլէի չափ սերմանելու հող, բաց ի մարգերէն և անտառներէն ելն։ Ս.հա վանուց տոբեկան բոլոր եկամուտն ասոնք են։ Բայց վանուցս մէջ միշտ երկու ծայր եղած է. մէկը առաջնորդեանք և միւսն ալ լուսարարեանք. այն գործերուն աւելի հմուտ է Խրիմեան, որովհետև 10 տարի աւելի ժամանակ վանուցս կառավարութեան ղեկն իրեն ձեռքն եղած է։

Յորեան վիճակէն իբրև եկամուտ կուգայ, և վանուց կալուածոց ալ վրայ դնելով կրկին չբաւէ. կհարկադրուի տակով յորեան առնել տարեկան 15000 ղրշի և կամ 10000ի։ Ս.հա այս է մեծ իմաստութիւն. ո՛վ որ կարող է՝ այն հաներլուկն հանել Ս. Կարապետու խեղճ վանուց նկատմամբ՝ այն իմաստուն է. իսկ միաբանութեան ուսած հայն՝ ինչ տեսակ է, չեմ կարող նկարագրել. ով որ

չհաւատար, պլի տ մը քուկս պահուած կայ, թող դայ տեսնէ, և հաւատայ, և այն ըսած պլիտէն մարդապլուխ 8 հատ կուտար Մամբրէ Սրբազան, Ս. յոռ ամենայնիւ վանքն ծանր պարտուց ենթարկուեցաւ, Շատեր պիտի ըսեն թէ ապա վանուց հարստութիւն ուր կերթայ, մենք ալ դիտնայինք՝ շատ լաւ կլինէր . . .

Թողուանք այն եկամուտները, որ ամէն տարի շարունակ կուգան աւելի կամ փոքր ինչ պակաս. երբ Մամբրէ Սրբազան եկաւ վանահայր, վանուց արկղի մէջ 1000 օսմանեան լիրայէն աւելի դրամ կար. մթերանոց՝ որ Սեբաստիոյ ձեռքէն առին, մէկ սենեակ մը լեցուն կտորեղէնք կար. 80 ղոյդ վերմակ և անկողին կար, բաց ի բոլոր վարդապետաց և գործակալաց քսակ եղածներէն. վանուց մառանատուն լեցուն էր խաղով և պանրով. այս պատրաստի եղածներն և նոր եկամուտն ալ գնալէն զկնի վանքը մեծ պարտուց ենթարկուեցաւ։

Դանք Մամբրէ Սրբազանի բարեկարգութեանց։

1. — Երբ վանուց պարսպի դռնէն ներս պիտի մանէր՝ Մխիթար վարդապետ, որ յուսալ լցուած էր, իր ծախքերն առնելու համար, մէկէն Մամբրէ Սրբազանին դալուն համար 2 խոյ դռան այս կողմ և այն կողմ մատաղ կտրել տուաւ։

2. — Քանի մը օրէն յետոյ, ուզուցին նախկին անօրէն ժողովոյ անդամներէն երկու անդամ առանց պատճառի ժողովէն հանել, որովհետև երբ հակառակ սահմանադրութեան հանրագիր կը ժողովէին՝ յիշեալ ժողովոյ անդամներ չստորագրեցին, և ատոր համար կուզէր Մամբրէ Սրբազան զանոնք ոտնակոխ առնել, և միշտ զՄխիթար դրդելով կռիւ կյարուցանէր։

3. — Դեռ նոր եկած էր, առանց միջոց տալու՝ մէկէն 105 օսմանեան լիրա իւր ծախքն առաւ, բաց ի վէղիր խանի սենեկի վարձքէն։ Ոմանք կըսեն թէ ինչու տուի՞ք, երբէ՞ք չեն ըսեր, թէ մատաղով ընդունուած մէկու մը ո՞վ կարող է բան ըսել։

4. — Մէկ ամիս չանցաւ, երկաւ ժո-

ղովրդեան մէջ այցելութեան որ իւր պաշտօն չէր. մեծամեծ ծախք ըրաւ. ժողովուրդը պատրեց թէ ինքը քաղաքական առաջնորդ է, և այս կերպով քաղաքական առաջնորդի աղդեցութիւն իւապառ կորցնց ։

5. — Երբ դարուն եկաւ, որ ժողովոյն փոփոխութեան ժամանակն էր, իւր ձեռնասուններէն ժողովական ընտրել տուաւ։ Այս միջոցին արժ. Վահան վարդապետ վանքէն եկաւ, տեսնելով որ մընալու տեղ չէ ։

6. — Իւր ձեռնասուններէն կազմեալ ժողովին յանձնեց վանուց շահուց և եկամտից պաշտօններ, և այսպէս վանուց եկամտից աղբիւրները իւր ճանկերու մէջն առաւ և ուզած կերպով խաղաց, և շատ անգամ ուզածն միայն ինքը կընէր, և յետոյ արձանագրել կուտար ։

7. — Երբէք միաբանական հաւասարութեան տեղան մը չպատրաստեց, և օր մը տեղանի մը գլուխ չանցաւ՝ հայոց կենդանեաց և հանդուցելոց համար աղօթքը ընելու, ընդհակառակն զրկանք-

շատ անգամ մուրալով մեր ուտելեաց մասին՝ դուրսէն կմուրայինք, իսկ իւր պարտագայք միշտ յոռի յղփութեան մէջ վանքի բարիքն անխնայաբար կվատնէին։

8. — Միշտ վանուց արկղէն իւր ուզած ծախքերն կընէր, և եթէ խօսող մը լինէր՝ իսկոյն կռիւ և բռնութիւն կընէր։ Անգամ մը Կ. Պոլսոյ ազգային վարչութեան որոշմամբ Կարին քննիչ գնաց. իր դարձին՝ վանքէն իւր ծախքն ուզեց, մինչդեռ Կարին ամէն կերպով իւր ծախք հոգացեր էր. վանուց արկղը բռնաբարելով 1200 ղրշ առաւ։ Այսպէս ալ երբ Մուշ գնաց և իւր ուզածին պէս զրպարտութեամբ զմիաբանութիւն հեռադրով ամբաստանեց, կրկին բռնաբարելով՝ վանուց արդիէն 800 ղրշ դրամ առաւ Արիստակէս վարդապետէն։ Այսպէս միշտ իւր կրից համար վանուց եկամուտը կը վատնէր։

9. — Շատ անգամ Մշեցի բարեկամ տաճիկներն վանք կբերէր իբրև լրտես և պահապան՝ վանուց միաբանութեան, առատ անուն մը վրայ դնելով թէ դա-

սատու է, և վանքէն ամենակոն տալով։ Ինչպէս Ալի էֆէնտի անունով տաճիկը շատ փոքրիկ հանեց վանուց մէջ, մինչև հինգ օր տնօրէն Ժողովոյ անդամներ վանքէն դուրս մեացին յիշեալ էֆէնտիի համար. Մամբրէ եպիսկոպոս ժողովի որոշումն առ ոչինչ համարելով դանի վանուց մէջ կպահէր. հապիւ բոլոր միաբանութեամբ դուրս հանեցին։

10. — Բռնի խափանեց վանուց հողագործութիւնը. բոլոր լծան տաւարներ հանդերձ հողագործութեան գործիքներով և արտեր սերմերով տուաւ իւր բարեկամաց, պատճառելով թէ կիսովի է, բայց տարած մարդիկ իրեն բարեկամ լինելով՝ վանքին բան մը չտուին, ինչպէս որ իր ձեռնատուն նկիշէ վարդապետի եզբայրներ 8 քիլէ ցորեան սերմ տարին վանքէն՝ վանքի տաւարներով, արտեր վանքէն, և Ղուրն ալ վանքէն, 7 քիլէ ցորեան վանքին տուաւ, որ տարած սերմէն ալ քիլէ մը պակաս։

11. — Քանի որ հողագործութիւնը չէր խափանած, կրսէր թէ պէտք է վանք-

քաղաքական դրութեան վերաձուի, և վարդապետներ դրել կարողաց նային. իսկ երբ հայց, իւղ ևն. վանքէն կտրեց, և վանքը պարտուց ենթարկեց, կըսէր թէ գնացէք ձեզ հայց դուէր կերէք. և այսպէս ոմանք մուրալով իրենց կերակուր կպատրաստէին վանուց մէջ. զայն ևս աղջուր կդարձնէր ուտողի գլխուն։

12. — Եթէ ժողովական մը իր կամաց համաձայն չդործէ, իսկոյն իբրև դատապարտեալ ոք ժողովէն կմերժուի. ինչպէս անանք, որ ասին թէ պէտք է Սրբազան Պատրիարք հօր և կեդրոնական վարչութեան որոշումն առնենք և յետոյ վանքն պարտուց ենթարկենք, բոլորովին դատապարտուեցան։ Պրիստակէս վարդապետ ալ երբ բաս թէ նախկին տնօրէն ժողովոյ անդամն քանի որ առանց հաշիւ տալու ժողովքէն ելնելով ծախուց պօրինաւորութեան դէմ կբողոքէ. ևս ինչպէս ստորագրեմ զայն, զայն ևս ժողովոյ անդամակցութենէն մերժեց և Նաղարեան Յովհաննէս վարդապետն տեղը դրաւ, որ ամբաստանեալ ցուցակները ստորագրեց։

13. — Քանի տարի որ վանահայր եղած է Մամբրէ սրբազան, օր մը ժողովալ եկեղեցւոյ անօթները թուի և

հաշուի չառին, և վաւերական ցուցակ մը չկայ եկեղեցւոյ զգեստուց և անօթներու համար. բոլորովին թողուցեր են եկեղեցին անխնամ. գիշեր և ցորեկ դրուներն բաց, ամեն մարդ ամեն ժամանակ եկեղեցին մտնելով եկեղեցիէն միշտ բան գողնալով կտանին, ինչպէս անցեալ տարուան գողցուած արծաթեայ մեծ խաչը, զոր գողնալով մինչև Քղի տարին, յետոյ ի ձեռն Ս.րժ. Խորէն վարդապետին վերադարձաւ վանք. երբէք քննութիւն մը չեղաւ. Խրիմեան Ս. Հայրիկն ալ վկայէ, որ եկեղեցին իբրև խանութ մը ամեն բան կգտնուի, սոխ, սխտոր, հաց, թթու, շաքար, պղպեղ։

14. — Գանձատուն՝ որ կից է Առաջնորդարանին, և միշտ սովորութիւն եղած է որ բանալին առաջնորդի մարդոց քով լինի, վանուց բոլոր պիտոյքն հոն կժողովի, շուխայ, խուրձնի, մանուտա, մեռաքսեղէնք, և բամպակեղէնք, շաքար, մեղր, կօշիկ ևն. Մանաւանդ սրբազան ունէր աղեկ մը իր քով, Սաեփան անուն, սպասաւոր, գանձապետ, միով բանիւ Առաջնորդի հոգեւոր որդին է. երբեմն բարկանալով գանձատան բանալին միայն քովէն առնելով շաբաթներով ինքը գանձապետութիւն ալ կընէր, և այս գրաս-

թեամբ ամիսն հեղ մը գանձատան պա-
կասութիւն կուղէր. տուին հեղեղի պէս
վանուց արկղէն ելնելով կերթար։

15. — Եկող առաջնորդներ, իրենց
նատած առաջնորդարան, զբօսարանի պէս
կզարդարեն, պատուաւոր ուխտաւորներ
կկանչուին առաջնորդի քով, բոլոր ծախք
անխնայ կերպով վանքէն կլինի, ոչխար
մորթել, ըմպելիք, մարդ-ադբուխ մէկ մէկ
գառ տուչի ձեռքով սեղանակներ կերթայ,
և պէտք է ըսուի թէ սրբազան առաջ-
նորդն գրկած է. իսկ եթէ եկամուտ լի-
նի՝ Առաջնորդին ժամուց է. միշտ պէտք
է 3–4 հարիւր ղրշ ալ պատրաստի քովը
պահեսի մեայ, որ պէտք եղած միջոցին
ծախք ընէ. եթէ դուրսէն քառանից և
աչհամբոյր լինի՝ այն ալ վանահօրն է, և
ասոնցմէ ի զատ տարեկան 20 լիրա ալ
տակ կառնու, և այս ալ վանուց օրէնքի
մէկ կարգն է, հարկ է որ կատարուի։

16. — Վանուց մէջ բարեկարգ դբաս-
ցոց մը եղած չէ այսքան եկամտից մէջ,
դիշերօթիկ խարխուլ դպրոց մը կայ, այն
ալ վանահօր ազդականաց, վարդապետաց,
սանուց և ազդականաց տեսակաւն է.
այն դպրոցի մէջ միայն հայերէն կը կար-
դան. և այն ալ յայտնի է թէ ինչ կատ-
վրին, քանի՛ վարժապետ, քանի՛ առաջ-

նորդցու վարդապետ աղջին հաստցեր է Ս. Կարապետու վանքն։

Ամեն մարդ կուզէ բարեկարգութիւն. սակայն ոչ օք չքսէր թէ, ինչ է այդ բարեկարգութիւն։ Վանօրէից խորհրդոց հրահանգի 12 յօդուածն արամադրած է որ անօրէն խորհուրդը դրամական փոխատուութիւն և փոխառուութիւն չկրնայ ընել մինչև որ կեդրոնական վարչութեան հաւանութիւնը չառնու։ Եթէ ընդհակառակն վարուի, իր անդամոց անձնական պարտք պիտի համարուի։ Մշոյ Ս. Կարապետու վանքը պարտուց ենթարկուած է հակառակ սոյն օրէնքին. Վանուց սոյն զեղծմանց համար մեք ի-Պատրիարքարան բողոքած ենք միշտ. ասոր համար Մամբրէ արքեպան զմեզ դատապարտած է, եթէ ոչ՝ մեք Գեր. վանահօր հետ երբէք թշնամութիւն մը չունէինք և չունինք։ Որչափ բողոքեցինք՝ պատասխան մը չառինք, և ասոր համար օր ըստ օրէ խռովութիւն շատցաւ։ Ուստի դիմեցինք ատ ի Կ. Պոլիս, բերանացի պատմել վանուց բոլոր անցքերն. հիմայ մեզ ալ ուրիշ ըսելիք մը չմնաց. Արքեպան Պատրիարք հօր, և կեդրոնական խառն վարչութեան գիտնալիք բանն է։

Վ Ե Ր Ջ

7523 - 7528

0003769
0003770
0003771
0003772
0003703
0003700

2013

ՀՀ Ազգային գրադարան
NL0003769

ՀՀ Ազգային գրադարան
NL0003770

ՀՀ Ազգային գրադարան
NL0003771

ՀՀ Ազգային գրադարան
NL0003772

ՀՀ Ազգային գրադարան
NL0003703

ՀՀ Ազգային գրադարան
NL0003700